Հաստատում եմ՝

Տնօրեն՝ DAGHBASHYAN ANAHIT 5107700314 Digitally signed by _____Ա.Դաղբաշյան

ՄԿԱԳ՝ _____Ե. Քոլայան

_____. _____ . 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022-2023

Կոտայքի մարզ

<<Աբովյանի կրթահամալիր>> ՊՈԱԿ

IVԲ դասարան

Դասվար՝ Ա. Ծատուրյան

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՒԼԱՅԻՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական տարվա սկզբին

1.Կազմել աշակերտների անվանացանկը և լրացնել էլ. մատյանը /ուստարվա երկրորդ շաբաթվա ընթացքում /

2.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների՝ լրացուցիչ կրթության հաստատություններում մասնակցության մասին

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը

Ամենօրյա աշխատանք

1.Էլ. մատյանում նշել բացակայությունները

2.Հետևել կարգապահությանը

3.Հետևել հերթապահությանը դասարանում

Ամենշաբաթյա աշխատանք

1.Վերահսկել դասամատյանի վարումն այլ ուսուցիչների կողմից

2.Անցկացնել դասղեկական ժամեր

3.Կատարել այլ պլանավորված աշխատանքներ

Ամենամսյա աշխատանքներ

1.Նախապատրաստել և կազմակերպել աշակերտների մասնակցությունը դպրոցական գործընթացներին

2.Օգնել դասարանական խորհրդին՝ ամփոփելու դասարանի կենսագործունեության փուլերի աշխատանքը

3.Վերահսկել դասարանի աշակերտների մասնակցությունը խմբակներում

4.Օգտվել հոգեբանական ախտորոշիչ թեստերից, հարցաշարերից, ախտորոշման այլ միջոցներից, դրանք նրբանկատորեն կիրառել դաստիարակչական աշխատանքում:

ԿՐԹԱԿԱՆ- ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. **Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը).**

Դասարանը բաղկացած է 32 սովորողներից (17 տղա, 15 աղջիկ): Ունեն առաջադիմության միջին և ավելի բարձր մակարդակ: Դասարանում տիրում է առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, կարողանում են հարթել կոնֆլիկտային իրավիճակները: Ընկերասեր են, պատրաստակամորեն կատարում են դասղեկի հանձնարարությունները:

2. **Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.**

ա/ Ուսումնական տարվա ընթացքում իրականացնել անձի համակողմանի և ներդաշնակ դաստիարակություն;

բ/ Դաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս պետք է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները:

գ/ Կիրառել արդյունավետ մեթոդներ՝ դասերը ժամանակին և արդյունավետ պատրաստելու համար;

դ/ Կանխել սովորողների բացակայությունները և ուշացումները:

ե/ Հետևել սովորողների ֆիզիկական և մտավոր առողջության պահպանմանը:

3. **Հայեցի դաստիարակություն.**

3.1 Հոգևոր դաստիարակություն. Հոգևոր դաստիարակությունը շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման, ինչպես նաև մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Այս կարևորությունը գիտակցելով՝ աշակերտին քրիստոնյա մեծացնելու, նաև հոգևոր ժառանգությունը փոխանցելու համար պետք է հաշվի առնել 1-ին հերթին նրա մտածողության, երևակայության, բարոյական առանձնահատկությունները:

3.2 Գեղագիտական դաստիարակություն. Գեղագիտական դաստիարակության կարևորագույն խնդիրն է երեխային սովորեցնել շրջակա աշխարհի մեջ տեսնելու հոգևոր հարստություն, բարություն, ստացվածություն և դրա հիման վրա իր մեջ արմատավորելու գեղեցիկը

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն. Ռազմահայրենասիրական դաստիարակությունը սկսվում է դպրոցից: Դպրոցը երեխայի մոտ պետք է դաստիարակի հայրենիքին անշահախնդիր ծառայելու, ակտիվ աշխատանքային և հասարակական գործունեության նկատմամբ ձգտում:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն. Ֆիզիկական դաստիարակությունը հանրակրթական դպրոցում իրականացնում է հետևյալ խնդիրները՝

ա/ աշակերտի ֆիզիկական զարգացում

բ/ աշակերտի մեջ բարոյական բարձր հատկանիշների զարգացում

գ/ շարժողական հատկությունների մշակում:

3.5 Աշխատանքային դաստիարակությունն. Աշխատանքային դաստիարակությունը մարդկային կարևորագույն գործունեությունն է: Դրա միջոցով երեխան փորձում է ինքնահաստատվել: Դրա միջոցով երեխան մտերմանում է մեծահասակների հետ, համագործակցում, սովորում պլանավորել ու վերահսկել սեփական գործողությունները, ձեռք է բերում կյանքի հմտություններ:

3.6 Բնապահպանական դաստիարակություն. Բնապահպանական դաստիարակությունը շատ կարևոր է դպրոցում: Սովորողները պետք է լուծեն ոչ թե գլոբալ էկոհարցեր, այլ հիմնահարցեր, որոնք վերաբերում են իրենց շրջապատին: Պետք է կարողանան տեսնել, գնահատել, կանխել իրենց շրջապատում տեղի ունեցող բնապահպանական խախտումները:

3.7 Դպրոց-ընտանիք կապը. Աշակերտի դաստիարակության արդյունավետությունը կախված է դպրոց-ընտանիք համագործակցությունից: Դաստիարակությունը հաջողություն է ունենում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքն ու երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1	Իմ դպրոցը և գրքերի կախարդական աշխարհը	սեպտեմբեր
2	Իմ տունն ու ընտանիքը	սեպտեմբեր
3	Իմ անկախ Հայաստան ՀՀ պետական խորհրդանիշները	սեպտեմբեր
4	Պատերազմը չարիք է	սեպտեմբեր
5	Տոնդ շնորհավոր սիրելի ուսուցիչ	հոկտեմբեր
6	Պահպանենք բնությունը	հոկտեմբեր
7	Ճանապարհային երթևեկության կանոնների վերաբերյալ գիտելիքների ստուգում	հոկտեմբեր
8	Իմ առօրյան	հոկտեմբեր
9	Ինչն է ինձ ուրախացնում	նոյեմբեր
10	Սովորողների տեղաշարժը խմբերով և շարասյուներով	նոյեմբեր
11	Աշնան գույները Աշնանային տրամադրության ստեղծում	նոյեմբեր
12	Ինչպես խուսափել վիրուսներից	նոյեմբեր
13	Երկրաշարժի զոհերի հիշատակի օր Անհրաժեշտ գիտելիքներ երկրաշարժից պաշտպանվելու համար	դեկտեմբեր
14	Ճանաչեք մեր հայրենիքը	դեկտեմբեր
15	Ամանորյա հրաշքներ Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ	դեկտեմբեր
16	Լինենք քաղաքավարի	հունվար

17	Հանդուրժողականությունը մեր դասարանում	հունվար
18	Իմ հզոր բանակ Զրույց՝ նվիրված հայոց բանակի օրվան	հունվար
19	Տեառնընդառաջ	փետրվար
20	Գիրքը մեր լավագույն ընկերն է	փետրվար
21	Մեր լեզուն մեր ուժն է	փետրվար
22	Հովհաննես Թումանյանը և մենք Իմ ամենասիրելի հեքիաթը	փետրվար
23	Կանանց միջազգային օր	մարտ
24	Ինչ է ընկերությունն ու բարեկամությունը	մարտ
25	Զրույց՝ «Երթևեկության կանոնները» թեմայով	մարտ
26	Որ գրական հերոսին կուզեի նմանվել	մարտ
27	Հումորը և ծիծաղը իմ կյանքում	ապրիլ
28	Տոնդ շնորհավոր, սիրելի մայրիկ	ապրիլ
29	Իմ իրավունքներն ու պարտականությունները	ապրիլ
30	Ես և կարգապահությունը	ապրիլ
31	Զրույց՝ նվիրված Մեծ եղեռնին	ապրիլ
32	Աշխատանքը մայրն է ամեն բարիքի	մայիս
33	Մայիսի 28-Հանրապետության օր	մայիս
34	Ինչպես եմ ուզում անցկացնել իմ ամառային արձակուրդը	մայիս

ՄԿԱԳ տեղակալ՝ Ե. Քոլայան

Դասվար՝ Ա. Ծատուրյան

ԱԲՈՎՅԱՆԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ

IVԲ ԴԱՍԱՐԱՆԻ

2022-2023 ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԵՎ ԲԱՑ ԴԱՍԵՐ

Դասվար՝ Ա. Ծատուրյան

Միջոցառում/բաց դաս	Ժամանակահատված
«Գիտելիքի օր» համադպրոցական միջոցառում	Սեպտեմբերի 1
«Ամանորյա դիմակահանդես» ներդասարանական միջոցառում	Դեկտեմբեր
«Գրքի տոն» Գիրք նվիրելու օր	Փետրվար
«Գարուն և մայրիկներ»	Մարտ
«Սուրբ Հարության տոն»	Ապրիլ
Ավարտական հանդես	Հունիս